



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
ՈՐՈՇՈՒՄ**

հուլիսի 2017 թվականի N°Ա  
ք. Երևան

**«ՀԳՆՔ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ՆԿԱՏՄԱՍԲ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2016 թվականի օգոստոսի 24-ի N°237Ա որոշմամբ «ՀԳՆՔ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) տուգանվել է մեկ միլիոն դրամ գումարի չափով՝ Ընկերությանը տրամադրված «Որոտան-7» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության N°0497 լիցենզիայի (այսուհետ՝ N°0497 լիցենզիա) պայմանների 6-րդ, 16-րդ և 28-րդ կետերի խախտման համար,

բ) Հանձնաժողովի աշխատակազմի կողմից էլեկտրական էներգիայի առևտրային հաշվառման ավտոմատ համակարգի միջոցով իրականացված վերլուծության արդյունքում պարզվել է, որ 2017 թվականի առաջին կիսամյակի ընթացքում դարձյալ գերազանցվել է Կայանի հաշվարկային հզորությունը,

գ) 2017 թվականի հունիսի 30-ից Ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ՝ վերջինիս կողմից էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզավորված գործունեությունը N°0497 լիցենզիայի պայմաններին համապատասխան իրականացնելու փաստի ուսումնասիրության նպատակով,

դ) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2017 թվականի հուլիսի 6-ի գրությամբ հայտնել է, որ Կայանի հաշվարկային հզորության գերազանցումը պայմանավորված է եղել Կայանում տեղակայված լրացուցիչ հիդրոագրեգատների ոչ

լիարժեք հզորությամբ աշխատելու հետևանքների վերացման համար հիդրոագրեգատներ արտադրող կազմակերպության ներկայացուցիչների հետ կատարված փորձարկումներով,

ե) №0497 լիցենզիայի պայմանների 6-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությունն իրականացնում է №0497 լիցենզիայի հավելվածում նշված հիմնական սարքավորումներով (երեքական հիդրոտուրբին և գեներատոր), որոնց հաշվարկային հզորությունը կազմում է 730կՎտ, 16-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության ընթացքում օգտագործվող սարքավորումների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերին և Լիցենզիայում նախատեսված պայմաններին, 28-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովին անմիջապես հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել լիցենզիայի պայմանների խախտումների,

զ) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է №0497 լիցենզիայի պայմանների 6-րդ, 16-րդ և 28-րդ կետերը,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետը, 42-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետը, 5-րդ կետի «բ» ենթակետը և 6-րդ կետը՝ **Հանձնաժողովը որոշում է.**

1. №0497 լիցենզիայի պայմանների 6-րդ, 16-րդ և 28-րդ կետերի խախտման համար Ընկերությանը տուգանել մեկ միլիոն դրամ գումարի չափով:
2. Ընկերությանը.
  - 1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում որոշման 1-ին կետով նախատեսված գումարը 900005242327 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
  - 2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից Ընկերության գործունեությունը համապատասխանեցնել №0497 լիցենզիայի պայմաններին.
3. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է.
  - 1) դիմել Հանձնաժողով՝ Կայանի վերակառուցման համար համաձայնություն ստանալու և №0497 լիցենզիայի պայմաններում փոփոխություն կատարելու համար.

- 2) սույն որոշումը բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանը օրենքով սահմանված կարգով իրագրելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ**

ք. Երևան  
հուլիսի 2017թ.